

2934



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան



«01» 04 2025թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 076 - 25

Նախաձեռնող՝

**«Ամրոցաքար» ՍՊԸ**

Արարատի մարզ, Շահումյան 2.5

Գործունեությունը՝

**Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի  
տրավերտինների Ամրոցասար տեղամասի  
արդյունահանում**

Արարատի մարզ

Առդիր՝ 5 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**  
**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ № 076 - 25

«01» ապրիլ 2025թ.

**Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի տրավերտինների Ամրոցասար տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«Ամրոցաքար» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Արարատ համայնք, Արարատ բնակավայր

**Ներածական մաս.** Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի տրավերտինների Ամրոցասար տեղամասը գտնվում է Արարատի մարզի Արարատ համայնքի Արարատ բնակավայրի վարչական տարածքում՝ Արարատ քաղաքի եզրագծից շուրջ 100մ հեռավորության վրա: Հայցվող տարածքի մակերեսը կազմում է 2.84 հա:

Հայցվող տարածքի հողերը ներկայացված են գյուղատնտեսական, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողերով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի թ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող գործունեության նպատակն է իրականացնել տրավերտինի արդյունահանում: Նախատեսվում է տեղամասը մշակել բաց եղանակով, միակողմանի խորացող մշակման համակարգով:

- Նախագծվող բացահանքի պարամետրերն են՝
- առավելագույն երկարությունը՝ 274.0 մ,
  - առավելագույն լայնությունը՝ 158.0 մ,
  - մշակման խորությունը – 15 մ,
  - մարվող օգտակար հանածոյի ծավալը՝ 402184.0 մ<sup>3</sup>,
  - արդյունահանվող օգտակար հանածոյի ծավալը՝ 256512.0 մ<sup>3</sup>,
  - մակաբացման ապարների ծավալը՝ 29746.0 մ<sup>3</sup>









Օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում բացահանքում կորուստները, որոնք կախված են հանքավայրի լեռնատեխնիկական պայմաններից, նախատեսվում է, որ կկազմեն 61300.0 մ<sup>3</sup>: Կորուստները, որոնք մնում են սանիտարական գոտու հատվածում, կկազմեն 84372.0 մ<sup>3</sup>, շահագործական կորուստները կկազմեն 0.5% և հաշվարկներում չեն ներառվել: Ընդհանուր բացահանքային կորուստները կկազմեն 147672. մ<sup>3</sup> կամ 36.2%:

Նախատեսվում է իրականացնել 200 մ երկարությամբ, 6 մ լայնությամբ մուտքային ավտոճանապարհի կարգաբերում, ավտոճանապարհի անցում՝ մինչև 865 մ հորիզոն, 50 մ երկարությամբ, 6 մ լայնությամբ: Լցակույտային հրապարակին մոտեցող ավտոճանապարհի անցում՝ 20.0 մ երկարությամբ, 6.0 մ լայնությամբ: Իրականացվելու է լցակույտային հրապարակի նախապատրաստում՝ 30.0մ<sup>3</sup> ծավալով, արտադրական հրապարակի կառուցում՝ 30մ<sup>3</sup> ծավալով: Շահագործման փուլում սպասվում է, որ կառաջանան շարժիչների բանեցված յուղեր՝ 1.19 տ/տարի, դիզելային յուղերի մնացորդներ՝ 0.9 տ/տարի, բանեցված դողածածկեր՝ 0.6 տ/տարի քանակներով: Օգտագործված յուղերն ու քսուքները հավաքվելու են առանձին տարաների մեջ և հանձնվելու են վերամշակման կետեր: Թափոններ են առաջանալու ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում: Թափոնները հավաքվելու և պահվելու են իրենց համար նախատեսված տարածքներում՝ հետագայում վերամշակող ընկերություններին վաճառելու համար: Կազմակերպությունների գործունեությունից առաջացած պինդ կենցաղային թափոնները կուտակվելու են տարածքում առկա աղբամանների մեջ:

Ըստ հաշվետվությունում եղած տեղեկատվության՝ հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, պատմության, բնության հուշարձաններ առկա չեն:

Նախատեսվում է իրականացնել ռեկուլտիվացիոն աշխատանքներ: Ռեկուլտիվացիայի ենթակա տարածքը կազմում է 3.1 հա:

Կենսաբանական ռեկուլտիվացիայի կենթարկվի բացահանքի տարածքը և արտադրական հրապարակը:

Ընդամենը ռեկուլտիվացման ծախսերը կկազմեն՝ 1670.0 հազ. ՀՀ դրամ:  
**Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.**

- Օգտագործված յուղերն ու քսուքները հավաքվելու են առանձին տարաների մեջ և հանձնվելու են վերամշակման կետեր:
- Աշխատանքների ժամանակ կիրառվող սարքավորումների և աշխատանքները սպասարկող մեքենաների վրա տեղադրվելու են արտաթորվող թունավոր նյութերի ֆիլտրներ:
- Թափոնները պարբերաբար դուրս են բերվելու բացահանքի տարածքից և տեղադրվելու են հատուկ նախատեսված հարթակներում կամ վաճառվելու են:
- Կենցաղային կեղտաջրերը՝ օրական 0.37մ<sup>3</sup> ծավալով լցվելու են բետոնային լցարան, որտեղից պարբերաբար տեղափոխվելու են հատուկ ծառայության ուժերով:
- Տեղամասում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսական տեսակի հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում են հատուկ միջոցառումներ:
- Փոշեմատուցման նպատակով իրականացվելու է օրական 3 անգամ:
- Բացահանքում աշխատող տեխնիկայի շարժիչների վառուցքները պետք է լինեն





կարգավորված՝ անսարք մեքենաների շահագործումը բացահայտվում պետք է արգելվի:

Աշխատանքների իրականացման ընթացքում ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

-Մթնոլորտային օդի որակի պարբերական մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ:

-Հողային ծածկույթի մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:

-Մակերևութային ջրերի մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ,

-Աղմուկի մակարդակի չափումներ՝ տարեկան երկու անգամ :

-Կենսաբազմազանության մշտադիտարկումներ՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակի, աճելավայրերի և ապրելավայրերի տարածքի, պոպուլյացիայի փոփոխության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 300.0 հազ.դրամ:

**Պատճառաբանական մաս.** Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի տրավերտինների Ամրոցասար տեղամասի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային լուսմներ Արարատի մարզի Արարատ բնակավայրում, որոնց ընթացքում մասնակիցները հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն և Արարատի մարզպետարանը: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և բնապահպանական միջոցառումների իրականացման արդյունքում կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

### Փորձաքննական պահանջներ

- Աշխատանքների իրականացման ընթացքում պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները Կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

-Աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:

-Աշխատանքների իրականացման գործընթացում ներգրավել ազդակիր բնակավայրի բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն աշխատանքների կատարման ժամանակ





պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

## ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Ամրոցաքար» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի տրավերտինների Ամրոցասար տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Գոհար Մինասյան